Anthem

# Medicare Advantage և Մաս D

Ծրագրի տարի. Հունվարի 1 – Դեկտեմբերի 31, 2023 թ.

## California

Los Angeles, Santa Clara վարչաշրջաններ

**Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP)**

Y0114_23_3002534_U_M_AR_0108 Accepted
H4161-001-000_CA_HMO DE-SNP

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

## Ներածություն

Այս փաստաթուղթը Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) կողմից ապահովագրված նպաստների և ծառայությունների համառոտ նկարագրությունն է: Այն ներառում է հաճախակի տրվող հարցերի պատասխանները, կարևոր կոնտակտային տվյալները, նպաստների և առաջարկվող ծառայությունների ակնարկը, ինչպես նաև տեղեկություններ ձեր՝ որպես Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) անդամի, իրավունքների մասին:Հիմնական տերմինները և դրանց սահմանումները, այբբենական կարգով նշված են *Անդամների ձեռնարկի* վերջին գլխում:

## Բովանդակություն


A. Հրաժարագրեր ........ 2

B. Հաճախակի տրվող հարցեր (FAQ) ........ 3

C. Ապահովագրված ծառայությունների ցուցակ ........ 9

D. Anthem MediBlue Full Dual Advantage-ից դուրս (HMO D-SNP) ապահովագրված նպաստներ ........ 30

E. Ծառայություններ, որոնք Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP), Medicare-ը և Medi-Cal-ը չեն ապահովագրում ........ 31

F. Որպես ծրագրի անդամ՝ դուք նաև պարտականություններ ունեք ........ 32

G. Ինչպես զանգատ կամ բողոքարկում ներկայացնել մերժված ծառայության դեպքում ........ 35

H. Ինչ անել, եթե կասկածում եք խարդախության մեջ ........ 37


Y0114_23_3002534_U_M_AR_0108 1041730MUSARMUB_0108

## A. Հրաժարագրեր

Սա 2023 թվականի Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) կողմից ապահովագրված առողջապահական ծառայությունների ամփոփագիրն է: Սա միայն ամփոփում է: Խնդրում ենք կարդալ *Անդամների ձեռնարկը* նպաստների ամբողջական ցանկի համար: Դուք կարող եք *կապվել* Անդամների սպասարկման կենտրոն ստորև նշված հեռախոսահամարով՝ ձեր *Անդամների ձեռնարկի* պատճենը խնդրելու համար: Դուք կարող եք նաև մուտք գործել ձեր *Անդամների տեղեկագիրքն* այս էջի ներքևում նշված ծրագրի կայքում:

- ❖ Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP) HMO D-SNP ծրագիր է, որը պայմանագրեր ունի Medicare-ի և California Medicaid ծրագրի հետ: Anthem Blue Cross Partnership ծրագրին անդամակցելը կախված է պայմանագրի թարմացումից: Anthem Blue Cross-ը Blue Cross of California-ի առևտրային նշանն է: Anthem Blue Cross-ը և Blue Cross of California Partnership Plan, Inc.-ը Blue Cross Association-ի անկախ արտոնագրված միավորներն են: Anthem-ը Anthem Insurance Companies, Inc.-ի գրանցված ապրանքանիշն է:
- ❖ **Medicare**-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կարդալ *Medicare-ը և Դուք* ձեռնարկը: Այն պարունակում է ամփոփ նկարագրություն Medicare-ի նպաստների, իրավունքների և պաշտպանությունների մասին, ինչպես նաև Medicare-ի մասին առավել հաճախակի տրվող հարցերի պատասխանները: Կարող եք ստանալ այն Medicare-ի կայքում (www.medicare.gov) կամ զանգահարելով 1-800-MEDICARE (1-800-633-4227), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն՝ 1-877-486-2048: **Medi-Cal-ի** մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիտել Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների վարչության (DHCS) կայքը (www.dhcs.ca.gov) կամ կապվել Medi-Cal Օմբուդսմենի գրասենյակ՝ 1-888-452-8609, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00 a.m.-ից 5:00 p.m.-ը: Դուք կարող եք նաև զանգահարել հատուկ Օմբուդսմենին այն մարդկանց համար, ովքեր ունեն և՛ Medicare, և՛ Medi-Cal՝ 1-855-501-3077, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 9:00 a.m.-ից 5:00 p.m.-ը:
- ❖ Դուք կարող եք անվճար ստանալ այս փաստաթուղթն այլ ձևաչափերով, ինչպես օրինակ՝ խոշոր տառատեսակով տպագրությունը, բրեյլը կամ ձայնագրությունը: Զանգահարեք՝ **1-833-707-3129** (TTY: **711**), 8 a.m.-ից 8 p.m.-ը, շաբաթը յոթ օր (բացառությամբ Գոհաբանության և Սուրբ ծննդյան տոների) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը, և երկուշաբթիից ուրբաթ (բացառությամբ արձակուրդների) ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը: Զանգն անվճար է:
- ❖ Այս փաստաթուղթը կարող եք անվճար ստանալ այլ լեզուներով և ձևաչափերով, օրինակ՝ խոշոր տառերով տպագրությամբ, բրայլյան տպագրությամբ և տվյալներով ու աուդիո սկավառակի վրա: Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն այս էջի ներքևում նշված հեռախոսահամարով: Զանգահարելիս տեղեկացրեք մեզ՝ արդյոք ցանկանում եք, որ դա մշտական պահանջ լինի: Սա նշանակում է, որ մենք ամեն տարի նույն փաստաթղթերը կուղարկենք ձեր պահանջած ձևաչափով և լեզվով: Կարող եք նաև զանգահարել մեզ՝ մշտական պահանջը փոխելու կամ չեղարկելու համար: Դուք կարող եք նաև գտնել ձեր փաստաթղթերն առցանց՝ այս էջի ներքևում գտնվող կայքում:

## B. Հաճախակի տրվող հարցեր (FAQ)

Հետևյալ աղյուսակը թվարկում է հաճախակի տրվող հարցերը:

| Հաճախակի տրվող հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| **Ի՞նչ է Medicare-Medi-Cal համակարգման ծրագիրը:** | Medicare-Medi-Cal համակարգման ծրագիրն առողջապահական ծրագիր է, որը պայմանագիր ունի ինչպես Medicare-ի, այնպես էլ Medi-Cal-ի հետ, անդամագրվածներին երկու ծրագրերի նպաստները տրամադրելու համար: Այն նախատեսված է 65 տարեկան և բարձր մարդկանց համար: Medicare-Medi-Cal համակարգման ծրագիրը կազմակերպություն է, որը բաղկացած է բժիշկներից, հիվանդանոցներից, դեղատներից, Երկարաժամկետ ծառայություններ և աջակցությունների (LTSS) մատակարարներից և այլ մատակարարներից: Այստեղ ներգրավված են նաև խնամքի կառավարիչներ, որոնք կաջակցեն ձեզ՝ կառավարելու ձեր բոլոր մատակարարներին, ծառայությունները և աջակցությունները: Նրանք բոլորը համատեղ աշխատում են՝ ձեզ անհրաժեշտ բուժօգնությունը ցուցաբերելու համար: |
| **Արդյո՞ք ես կստանամ Medicare-ի և Medi-Cal-ի նույն նպաստները Anthem MediBlue Full Dual Advantage-ում (HMO D-SNP), ինչ հիմա ստանում եմ:** (շարունակությունը հաջորդ էջին) | Դուք կստանաք ձեր ապահովագրված Medicare և Medi-Cal նպաստների մեծ մասն անմիջապես Anthem MediBlue Full Dual Advantage-ից (HMO D-SNP): Դուք կաշխատեք մատակարարների թիմի հետ, որը կօգնի ձեզ որոշել, որ ծառայություններն են լավագույնս համապատասխանում ձեր կարիքներին: Սա նշանակում է, որ որոշ ծառայություններ, որոնք դուք այժմ ստանում եք, կարող են փոխվել՝ ելնելով ձեր կարիքներից, և ձեր բժշկի ու խնամքի թիմի գնահատականներից: Դուք կարող եք նաև ստանալ այլ նպաստներ ձեր առողջապահական ծրագրից դուրս, ինչպես հիմա եք անում, անմիջապես նահանգային կամ շրջանային գործակալությունից, ինչպիսին է Տնային աջակցության ծառայությունները, հոգեկան առողջության և թմրամիջոցների օգտագործման խանգարումների մասնագիտացված ծառայությունները կամ տարածաշրջանային կենտրոնի ծառայությունները: |

## Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Հաճախակի տրվող հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| **Արդյո՞ք ես կստանամ Medicare-ի և Medi-Cal-ի նույն նպաստները Anthem MediBlue Full Dual Advantage-ում (HMO D-SNP), ինչ հիմա ստանում եմ:** (շարունակություն) | Երբ դուք անդամագրվեք Anthem MediBlue Full Dual Advantage-ին (HMO D-SNP), դուք և ձեր բժշկական թիմը կհամագործակցեք միասին և կմշակեք Անհատականացված խնամքի պլան, որը կբավարարի ձեր առողջապահական և օժանդակման կարիքներն՝ արտացոլելով ձեր անձնական նախապատվություններն ու նպատակները:<br><br>Եթե դուք ընդունում եք որևէ Medicare Մաս D դեղատոմսով դեղեր, որը Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP) սովորաբար չի ապահովագրում, դուք կարող եք ստանալ ժամանակավոր դեղապաշար, և մենք կօգնենք ձեզ անցնել մեկ այլ դեղի կամ ստանալ բացառություն Anthem MediBlue Full Dual Advantage-ից (HMO D-SNP)՝ ներառելու այդ դեղն ապահովագրության մեջ, եթե այն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն այս էջի ներքևում նշված հեռախոսահամարով: |
| **Կարո՞ղ եմ այցելել նույն բժիշկներին, որոնց այցելում եմ հիմա:** (շարունակությունը հաջորդ էջին) | Շատ հաճախ՝ այո: Եթե ձեր մատակարարները (ներառյալ բժիշկները, հիվանդանոցները, թերապևտները, դեղատները և առողջապահական այլ ծառայությունների մատակարարները) աշխատում են Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) հետ և ունեն պայմանագիր մեզ հետ, կարող եք շարունակել այցելել նրանց:<br><br>• Մեզ հետ պայմանագիր ունեցող մատակարարները «ցանցում են»: Ցանցային մատակարարները մասնակցում են մեր ծրագրին: Սա նշանակում է, որ նրանք ընդունում են մեր ծրագրի անդամներին և մատուցում են ծառայություններ, որոնք ընդգրկում է մեր ծրագիրը: **Դուք պետք է օգտվեք Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) ցանցի մատակարարներից:** Եթե դուք օգտվում եք մատակարարներից կամ դեղատներից, որոնք մեր ցանցում չեն, ծրագիրը կարող է չվճարել այս ծառայությունների կամ դեղերի համար: |

| Հաճախակի տրվող հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| **Կարո՞ղ եմ այցելել նույն բժիշկներին, որոնց այցելում եմ հիմա:** (շարունակություն) | • Եթե դուք շտապ կամ արտակարգ բուժօգնության, կամ բնակության վայրից դուրս դիալիզի ծառայության կարիք ունեք, դուք կարող եք օգտվել Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) ծրագրում չներառված մատակարարներից:<br>• Եթե դուք ներկայումս բուժում եք ստանում մի մատակարարից, որը դուրս է Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) ցանցից կամ հաստատված հարաբերություններ ունեք մատակարարի հետ , որը դուրս է Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) ցանցից, զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ ստուգելու, թե արդյոք միացված եք: Դուք կարող եք շարունակել օգտվել այն բժիշկներից, որոնցից այժմ օգտվում եք մինչև 12 ամիս՝ Medicare-ի կողմից ապահովագրված ծառայությունների համար և մինչև 12 ամիս՝ Medi-Cal-ի ապահովագրված ծառայությունների համար: Դուք կտեղեկացվեք խնամքի շարունակականության ժամկետի ավարտից առաջ 30 օրացուցային օրվա ընթացքում՝ ձեր խնամքը ցանցային մատակարարին փոխանցելու համար: «Խնամքի շարունակականություն» խնդրելու համար կապվեք Անդամների սպասարկման կենտրոն՝ **1-833-707-3129** (TTY: **711**), երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m.-ը: Զանգն անվճար է:<br><br>Պարզելու համար՝ արդյոք ձեր բժիշկները հանդիսանում են ծրագրի ցանցի մասնակիցներ, զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն կամ կարդացեք Anthem MediBlue Dual Advantage-ի *Մատակարարների և դեղատների ուղեցույցը* https://shop.anthem.com/medicare/ca կայքում:<br><br>Եթե Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP) նոր է ձեզ համար, մենք կաշխատենք ձեզ հետ, որպեսզի մշակենք այնպիսի Անհատականացված բժշկական խնամքի ծրագիր, որը կբավարարի ձեր կարիքները: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Հաճախակի տրվող հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| **Ի՞նչ է Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) խնամքի համակարգողը:** | Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) խնամքի համակարգողն այն հիմնական անձն է, ում հետ դուք կարող եք կապ հաստատել: Այս անձն օգնում է կառավարել ձեր բոլոր մատակարարներին ու ծառայությունները և համոզվում, որ դուք ստանում եք այն, ինչը ձեզ հարկավոր է: |
| **Ի՞նչ են երկարատև ծառայությունները և աջակցումը (LTSS):** | Երկարաժամկետ ծառայություններ և աջակցությունները օգնություն են այն մարդկանց համար, ովքեր օգնության կարիք ունեն առօրյա գործեր կատարելու համար, ինչպիսիք են լողանալը, սանհանգույցից օգտվելը, հագնվելը, սնունդ պատրաստելը և դեղորայք ընդունելը: Այս ծառայությունների մեծ մասը տրամադրվում է ձեր տանը կամ ձեր համայնքում, սակայն կարող է տրամադրվել ծերանոցում կամ հիվանդանոցում: Որոշ դեպքերում վարչաշրջանը կամ այլ գործակալություն կարող է կառավարել այս ծառայությունները, և ձեր խնամքի համակարգողը կամ խնամքի թիմը կաշխատի այդ գործակալության հետ: |
| **Ի՞նչ է Տարեցների բազմաֆունկցիոնալ ծառայությունների ծրագիրը (MSSP):** | MSSP-ն ապահովում է շարունակական խնամքի համակարգում առողջապահական ծառայությունների մատակարարների հետ, ավելին, քան ձեր առողջապահական ծրագիրն արդեն իսկ ապահովում է, և կարող է կապել ձեզ այլ անհրաժեշտ համայնքային ծառայությունների և ռեսուրսների հետ: Այս ծրագիրն օգնում է ձեզ ստանալ ծառայություններ, որոնք օգնում են ձեզ ինքնուրույն ապրել ձեր տանը: |
| **Ի՞նչ է պատահում, եթե ես ծառայության կարիք ունեմ, բայց Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) ցանցում ոչ ոք չի կարող այն տրամադրել:** | Ծառայությունների մեծ մասը կտրամադրվի մեր ցանցային մատակարարների կողմից: Եթե ձեզ հարկավոր է ծառայություն, որը հնարավոր չէ տրամադրել մեր ցանցի շրջանակներում, Anthem MediBlue Full Dual Advantage-ը կվճարի արտացանցային մատակարարի ծախսերը: |
| **Որտե՞ղ է հասանելի Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP):** | Այս ծրագրի ծառայության տարածքը ներառում է՝ Los Angeles վարչաշրջան և Santa Clara վարչաշրջան, California: Ծրագրին միանալու համար դուք պետք է ապրեք այս տարածքներից մեկում: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Հաճախակի տրվող հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| **Ի՞նչ է նախօրոք լիազորումը:** | Նախօրոք լիազորումը նշանակում է Anthem MediBlue Full Dual Advantage-ի թույլտվություն՝ ծառայություններ փնտրելու մեր ցանցից դուրս կամ ծառայություններ ստանալ, որոնք սովորաբար ապահովարված չեն մեր ցանցի կողմից, **նախքան** ծառայությունների ստանալը: Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP) չի կարող ապահովագրել ծառայությունը, ընթացակարգը, ապրանքը կամ դեղը, եթե դուք նախօրոք լիազորում չեք ստացել:<br><br>**Եթե ձեզ անհրաժեշտ է հրատապ կամ շտապ օգնության կամ տարածքից դուրս դիալիզի ծառայությունների, ձեզ պետք չէ նախօրոք լիազորում ստանալ:** Anthem MediBlue Full Dual Advantage-ը կարող է ձեզ կամ ձեր մատակարարին տրամադրել ծառայությունների կամ ընթացակարգերի ցանկ, որոնք պահանջում են նախօրոք լիազորում ստանալ Anthem MediBlue Full Dual Advantage-ից՝ նախքան ծառայության մատուցումը: Եթե հարցեր ունեք, թե արդյոք պահանջվում է նախօրոք լիազորում հատուկ ծառայությունների, ընթացակարգերի, ապրանքների կամ դեղերի համար, օգնության համար զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն այս էջի ներքևում նշված համարով: |
| **Ի՞նչ է ուղեգիրը:** | Ուղեգիր նշանակում է, որ ձեր առաջնային խնամքի մատակարարը (PCP) պետք է թույլտվություն տա, նախքան կկարողանաք այցելել մատակարարի, որը ձեր առաջնային խնամքի մատակարարը չէ: Ուղեգիրը տարբերվում է նախօրոք լիազորումից: Եթե ձեր PCP-ից ուղեգիր չեք ստանում, Anthem MediBlue Full Dual Advantage-ը կարող է չփոխհատուցել ծառայությունները: Anthem MediBlue Full Dual Advantage-ը կարող է ձեզ տրամադրել ծառայությունների ցանկ, որոնք պահանջում են ուղեգիր ստանալ ձեր PCP -ից նախքան ծառայության մատուցումը:<br><br>Տեսեք *Անդամների ձեռնարկը*՝ ավելին իմանալու համար, թե երբ պետք է ուղեգիր ստանաք ձեր առաջնային խնամքի մատակարարից: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Հաճախակի տրվող հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| **Արդյո՞ք ես վճարում եմ ամսական գումար (որը նաև կոչվում է հավելավճար) Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) ներքո:** | Ոչ: Քանի որ դուք ունեք Medi-Cal, դուք չեք վճարի որևէ ամսական հավելավճար, ներառյալ ձեր Medicare Մաս B հավելավճարը ձեր առողջության ապահովագրության համար: |
| **Արդյո՞ք ես վճարում եմ հանեևլի գումար՝ որպես Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) անդամ:** | Ոչ: Դուք չեք վճարում հանեևլի գումարներ Anthem MediBlue Full Dual Advantage-ում (HMO D-SNP): |
| **Որքա՞ն է իմ գրպանից վճարվող առավելագույն գումարը, որը ես կվճարեմ բժշկական ծառայությունների համար որպես Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) անդամ:** | Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) բժշկական ծառայությունների համար ծախսերի բաշխում չկա, այնպես որ ձեր գրպանից տարեկան ծախսերը կկազմեն $0: |

## C. Ապահովագրված ծառայությունների ցուցակ

Հետևյալ աղյուսակը կարճ ամփոփում է, թե ինչ ծառայություններ կարող եք ստանալ, ձեր ծախսերը և նպաստների վերաբերյալ կանոնները:

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ անհրաժեշտ է հիվանդանոցային խնամք** (շարունակությունը հաջորդ էջին) | Հիվանդանոցում մնալը | $0 | Մեր ծրագիրն ապահովագրում է 90 օր ստացիոնար հիվանդանոցում մնալու համար:<br>Մեր ծրագիրը ներառում է նաև 60 «ցկյանս պահուստային օր»: Սրանք «լրացուցիչ» օրեր են, որոնք մենք ապահովագրում ենք: Եթե ձեր հիվանդանոցում մնալը 90 օրից ավելի է, կարող եք օգտագործել այս լրացուցիչ օրերը: Այս լրացուցիչ 60 օրերը սպառելուց հետո ձեր ստացիոնար հիվանդանոցային ապահովագրությունը կսահմանափակվի մինչև 90 օր:<br>Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Բժշկական կամ վիրաբուժական խնամք | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ անհրաժեշտ է հիվանդանոցային խնամք** (շարունակություն) | Ամբուլատոր հիվանդանոցային ծառայություններ, ներառյալ դիտարկում | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Ամբուլատոր վիրաբուժական կենտրոնի (ASC) ծառայություններ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| **Ձեզ անհրաժեշտ է բժիշկ** | Այցելություններ վնասվածքների կամ հիվանդությունների բուժման համար | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Մասնագիտական խնամք | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Ֆիզիկական բարեկեցության այցերը | $0 | |
| | Ձեզ հիվանդությունից զերծ պահելու բուժօգնություն, ինչպիսիք են պատվաստումները գրիպի դեմ և քաղցկեղի դեմ սկրինինգներ | $0 | |
| | «Բարի գալուստ Medicare» (կանխարգելիչ այցելություն միայն մեկ անգամ) | $0 | Սահմանափակվում է մեկ անգամով: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Շտապ օգնության կարիք ունեք** | Անհետաձգելի բուժօգնության ծառայություններ | $0 | Այս ծրագիրն ապահովագրում է անհետաձգելի բուժօգնության ծառայությունները, ինչպես ցանցում, այնպես էլ ցանցից դուրս, և ձեզ հարկավոր չէ ուղեգիր կամ թույլտվություն ստանալ նախքան բժշկական խնամքի դիմելը: |
| | Անհետաձգելի բուժօգնություն | $0 | Այս ծրագիրն ապահովագրում է անհապաղ բուժօգնության ծառայությունները, ինչպես ցանցում, այնպես էլ ցանցից դուրս, և ձեզ հարկավոր չէ ուղեգիր կամ թույլտվություն ստանալ նախքան բժշկական խնամքի դիմելը: |
| **Ձեզ անհրաժեշտ են բժշկական թեստեր** (շարունակությունը հաջորդ էջին) | Ախտորոշիչ ճառագայթաբանական ծառայություններ (օրինակ՝ ռենտգենյան ճառագայթներ կամ այլ պատկերավորման ծառայություններ, օրինակ՝ համակարգչային տոմոգրաֆիայի (CAT) սկանավորում կամ Մագնիսական ռեզոնանսային պատկերումներ (MRI)) | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ անհրաժեշտ են բժշկական թեստեր** (շարունակություն) | Լաբորատոր թեստեր և ախտորոշիչ ընթացակարգեր, ինչպիս օրինակ արյան անալիզ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| **Ձեզ անհրաժեշտ են լսողական/լսողության ծառայություններ** | Լսողության սքրինինգ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Լսողական օժանդակ սարքեր | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր:<br>Լրացուցիչ ապահովագրությունը կարող է հասանելի լինել<br>Medi-Cal<br>Խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների տեղեկագրքին* լրացուցիչ մանրամասների համար կամ դիմել ձեր խնամքի համակարգողին օգնության համար: |
| **Ձեզ անհրաժեշտ է ատամնաբուժական խնամք** (շարունակությունը հաջորդ էջին) | Ատամնաբուժական զննում և կանխարգելիչ խնամք | $0 | Այս ծրագրի ատամնաբուժական նպաստների մասին տեղեկություններ կարող եք գտնել ձեր *Անդամների տեղեկագրքում*: Ձեր տարածքում ատամնաբույժ գտնելու համար, որը գտնվում է ծրագրի ցանցում, անցեք հետևյալ հղումով՝ https://shop.anthem.com/medicare/ca: |

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ անհրաժեշտ է ատամնաբուժական խնամք** (շարունակություն) | Ատամնաբուժական զննում և կանխարգելիչ խնամք (շարունակություն) | | Ընտրեք **Օգտակար գործիքներ (Useful Tools)** > **Գտնել բժիշկ (Find a Doctor)** > մուտքագրեք ձեր անձնական տվյալները > **Ատամնաբուժական մատակարար (Dental Provider)**<br>Լրացուցիչ ատամնաբուժական նպաստներ հասանելի են Medi-Cal-ի միջոցով՝ [https://www.dhcs.ca.gov/services/Pages/MediCalDental.aspx](https://www.dhcs.ca.gov/services/Pages/MediCalDental.aspx) |
| | Վերականգնողական և շտապ ատամնաբուժական խնամք | $0 | Այս ծրագիրը ներառում է տարեկան $1500 նպաստ համապարփակ ատամնաբուժական ծառայությունների համար, ինչպիսիք են հեռացումը և ատամնաշարը:<br>Վերականգնողական բուժական խնամքի համար հնարավոր է պետք լինի նախօրոք լիազորում:<br>Այս ծրագրի ատամնաբուժական նպաստների մասին տեղեկություններ կարող եք գտնել ձեր *Անդամների տեղեկագրքում*: Ձեր տարածքում ատամնաբույժ գտնելու համար, որը գտնվում է ծրագրի ցանցում, անցեք հետևյալ հղումով՝ [https://shop.anthem.com/medicare/ca](https://shop.anthem.com/medicare/ca): |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ անհրաժեշտ է ատամնաբուժական խնամք** (շարունակություն) | Վերականգնողական և շտապ ատամնաբուժական խնամք (շարունակություն) | | Ընտրեք **Օգտակար գործիքներ (Useful Tools)** > **Գտնել բժիշկ (Find a Doctor)** > մուտքագրեք ձեր անձնական տվյալները > **Ատամնաբուժական մատակարար (Dental Provider)**<br>Լրացուցիչ ատամնաբուժական նպաստներ հասանելի են Medi-Cal-ի միջոցով՝ https://www.dhcs.ca.gov/services/Pages/MediCalDental.aspx |
| **Ձեզ անհրաժեշտ է աչքի խնամք** (շարունակությունը հաջորդ էջին) | Լսողության փորձարկումներ | $0 | Այս ծրագիրը ներառում է աչքի մեկ ստանդարտ հետազոտում ամեն տարի: |
| | Ակնոցներ կամ հպովի ոսպնյակներ | $0 | Այս ծրագիրը ներառում է տարեկան $300 նպաստ ակնոցների և/կամ կոնտակտային ոսպնյակների համար:<br>Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր:<br>Խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների ձեռնարկին* լրացուցիչ մանրամասների համար կամ դիմել ձեր խնամքի համակարգողին օգնության համար:<br>Լրացուցիչ ապահովագրությունը կարող է հասանելի լինել Medi-Cal-ի միջոցով: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ անհրաժեշտ է աչքի խնամք** (շարունակություն) | Տեսողության այլ խնամք | $0 | |
| **Ձեզ անհրաժեշտ են հոգեկան առողջության ծառայություններ** | Հոգեկան առողջության ծառայություններ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Հոգեկան առողջության ծառայությունների կարիք ունեցող մարդկանց ստացիոնար և ամբուլատոր խնամք և համայնքային ծառայություններ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր:<br>Խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների տեղեկագրքին* լրացուցիչ մանրամասների համար: |
| **Ձեզ անհրաժեշտ են թմրամիջոցների օգտագործման խանգարման ծառայություններ** | Թմրամիջոցների օգտագործման խանգարման ծառայություններ | $0 | Խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների տեղեկագրքին* մանրամասների համար: |
| **Ձեզ անհրաժեշտ է ապրելու վայր մարդկանց հետ, ովքեր կարող են ձեզ օգնել** (շարունակությունը հաջորդ էջին) | Որակավորված բուժքույրական խնամք | $0 | Այս ծրագիրը ներառում է մինչև 100 օր Հմուտ բուժքույրական հաստատությունում (SNF): |
| | Խնամք բուժքույրական խնամքի տանը | $0 | Խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների տեղեկագրքին* լրացուցիչ մանրամասների համար: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ անհրաժեշտ է ապրելու վայր մարդկանց հետ, ովքեր կարող են ձեզ օգնել** (շարունակություն) | Մեծահասակների խնամատարություն և մեծահասակների խմբակային խնամատարություն | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր:<br>Խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների տեղեկագրքին* լրացուցիչ մանրամասների համար: |
| **Կաթվածի կամ վթարի հետևանքով ձեզ անհրաժեշտ է թերապիա** | Աշխատանքային, ֆիզիկական կամ խոսքի թերապիա | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| **Դուք օգնության կարիք ունեք առողջապահական ծառայություններին հասնելու համար** (շարունակությունը հաջորդ էջին) | Շտապ օգնության ծառայություններ | $0 | Նախօրոք լիազորումը վերաբերում է ոչ շտապ շտապօգնության փոխադրման ծառայություններին: |
| | Շտապ բուժօգնություն փոխադրում | $0 | |
| | Փոխադրում դեպի բժշկական ժամադրություններ և ծառայություններ | $0 | Այս ծրագիրը ներառում է 65 միակողմանի ուղևորություններ՝ ծրագրի կողմից հաստատված տեղավայրեր հասնելու համար: Ուղևորությունները սահմանափակված են մինչև 60 մղոն և պահանջում են նախազգուշացում 48 ժամ առաջ: Լրացուցիչ ապահովագրությունը |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Դուք օգնության կարիք ունեք առողջապահական ծառայություններին հասնելու համար** (շարունակություն) | Փոխադրում դեպի բժշկական ժամադրություններ և ծառայություններ (շարունակություն) | | հասանելի է Medi-Cal-ի միջոցով: Խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների տեղեկագրքին* մանրամասների համար: |
| **Դուք ձեր հիվանդության կամ վիճակի բուժման համար անհրաժեշտ դեղերի կարիք ունեք** (շարունակությունը հաջորդ էջին) | Medicare Մաս B-ի դեղատոմսային դեղեր | $0 | Մաս B-ի դեղերը ներառում են ձեր բժշկի կողմից իր գրասենյակում տրված դեղերը, բերանով ընդունվող քաղցկեղի դեմ որոշ դեղեր և որոշ բժշկական սարքավորումներով օգտագործվող կոնկրետ դեղեր: Կարդացեք *Անդամների ձեռնարկն* այդ դեղերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար:<br>Նախօրոք լիազորումը պարտադիր է: |
| | Անմակնիշ դեղեր (առանց ապրանքանիշային անվանման) | $0 | Ապահովագրված դեղերի տեսակների նկատմամբ հնարավոր է կիրառվեն սահմանափակումներ: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) *Ապահովագրված դեղերի ցուցակ* (Դեղերի ցուցակ):<br>Երկարացված օրվա պաշարները հասանելի են 1-ին և 6-րդ Կարգի դեղատոմսերով՝ նույն գնով: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Դուք ձեր հիվանդության կամ վիճակի բուժման համար անհրաժեշտ դեղերի կարիք ունեք** (շարունակություն) | Ապրանքանիշային անվանմամբ դեղեր | $0 | Ապահովագրված դեղերի տեսակների նկատմամբ հնարավոր է կիրառվեն սահմանափակումներ: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) *Ապահովագրված դեղերի ցուցակ* (Դեղերի ցուցակ):<br><br>Երկարացված օրվա մատակարարումը հասանելի չէ ապրանքանիշային դեղատոմսերում: |
| | Առանց դեղատոմսի վաճառվող դեղեր (OTC)՝ | $0 | Ապահովագրված դեղերի տեսակների նկատմամբ հնարավոր է կիրառվեն սահմանափակումներ: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) *Ապահովագրված դեղերի ցուցակ* (Դեղերի ցուցակ): |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Դուք պետք է ավելի լավ զգալու համար օգնություն ստանաք կամ հատուկ առողջական կարիքներ ունեք** | Վերականգնողական ծառայություններ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Բժշկական սարքավորումներ տան կիրառման համար | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Դիալիզի ծառայություններ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| **Ձեզ անհրաժեշտ է ոտնաբուժության խնամք** | Ոտնաբուժության ծառայություններ | $0 | Ի լրումն սովորական ոտքերի խնամքի, այս ծրագիրը ներառում է անսահմանափակ, ոչ առօրյա այցերի ապահովագրություն ոտնաբուժության համար: |
| | Օրթոզային ծառայություններ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ անհրաժեշտ են Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ (DME)**<br><br>**Նշում.** Սա DME-ների ամբողջական ցուցակը չէ: Ամբողջական ցուցակի համար դիմեք Անդամների սպասարկման կենտրոն կամ տես *Անդամների տեղեկագրքի* Գլուխ 4-ը: | Անվասայլակներ, հենակներ և քայլակներ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Ինհալյատորներ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Բժշկական սարքավորումներ և միջոցներ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| **Դուք օգնության կարիք ունեք տանը բնակվելու համար**<br><br>(շարունակությունը հաջորդ էջին) | Առողջապահական ծառայություններ տնային պայմաններում | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Դուք օգնության կարիք ունեք տանը բնակվելու համար** (շարունակություն) | Տնային ծառայություններн, ինչպիսիք են մաքրումը կամ տնային տնտեսության մասին հոգ տանելը, կամ տան փոփոխությունները, ինչպիսիք են ճաղավանդակները<br>Տնային ծառայությունները, ինչպիսիք են մաքրումը կամ տնային տնտեսության մասին հոգ տանելը, կամ տան փոփոխությունները, ինչպիսիք են ճաղավանդակները (շարունակություն) | $0 | Տնային ծառայությունների համար. խնդրում ենք կապվել ձեր խնամքի համակարգողի հետ՝ տեղեկություններ ստանալու համար, թե ինչպես օգտվել այս ծառայություններից:<br>Տան փոփոխությունների համար. խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների տեղեկագրքին*մանրամասների համար: |
| | Մեծահասակների օրվա առողջություն, Համայնքային հիմքով տարեցների ծառայություններ (CBAS) կամ այլ օժանդակ ծառայություններ | $0 | CBAS-ի և մեծահասակների օրվա առողջության համար. խնդրում ենք կապվել ձեր խնամքի համակարգողի հետ՝ տեղեկություններ ստանալու համար, թե ինչպես օգտվել այս ծառայություններից:<br>Այլ օժանդակ ծառայությունների համար. խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների տեղեկագրքին* մանրամասների համար:<br>Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Դուք օգնության կարիք ունեք տանը բնակվելու համար** (շարունակություն) | Ցերեկային վերականգնողական ծառայություններ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: Այս ծառայություններն ապահովագրված են CBAS-ով (վերևում): Խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների տեղեկագրքին* լրացուցիչ մանրամասների համար: |
| | Ծառայություններ, որոնք կօգնեն ձեզ ապրել ինքնուրույն (տնային առողջապահական ծառայություններ կամ անձնական խնամքի օգնականի ծառայություններ) | $0 | Խնդրում ենք կապվել ձեր խնամքի համակարգողի հետ՝ տեղեկություններ ստանալու համար, թե ինչպես դիմել և օգտվել այս ծառայություններից: Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: Խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների ձեռնարկին* լրացուցիչ մանրամասների համար: |
| **Լրացուցիչ ծառայություններ** (շարունակությունը հաջորդ էջին) | Քիրոպրակտիկ ծառայություններ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Շաքարախտի պարագաներ և ծառայություններ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Լրացուցիչ ծառայություններ** (շարունակություն) | Պրոթեզավորման ծառայություններ | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Ճառագայթային թերապիա | $0 | Կարող են պահանջվել նախօրոք լիազորում և ուղեգիր: |
| | Ծառայություններ, որոնք կօգնեն կառավարել ձեր հիվանդությունը | $0 | Խնդրում ենք ծանոթանալ ձեր *Անդամների տեղեկագրքին* մանրամասների համար: |
| | 24/7 բուժքույրական գիծ | $0 | 24-ժամյա հասանելիություն բուժքույրերի օգնության գիծ, շաբաթը 7 օր, տարին 365 օր. **1-855-658-9249**: |
| | Էական հավելումներ<br>(Նպաստ ընտրելու համար խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն կամ տեսնել ձեր *Անդամների տեղեկագիրքը* հրահանգների համար): | $0 | Դուք կարող եք ընտրել այս նպաստներից երկուսը յուրաքանչյուր օրացուցային տարի՝ առանց լրացուցիչ ծախսերի.<br>• **Օժանդակ սարքեր**<br>Դուք կարող եք ստանալ տարեկան մինչև $500 նպաստ օժանդակ և անվտանգության սարքերի համար, ինչպիսիք են բազրիքները, ցնցուղի աթոռները, սանհանգույցի բարձրացված նստատեղերը և շարժունակության ժամանակավոր թեքահարթակները: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Լրացուցիչ ծառայություններ** (շարունակություն) | Էական հավելումներ (շարունակություն) | | • **Ֆլեքս հաշիվ – ատամնաբուժություն, տեսողություն, լսողություն**<br>Վայելեք տարեկան մինչև $500 լրացուցիչ ապահովագրություն ձեր ատամնաբուժական, տեսողության կամ լսողության կարիքների համար: Դուք կարող եք ընտրել, թե ինչպես ծախսել ձեր տարեկան նպաստը՝ գրպանի ծախսերի կամ լրացուցիչ ծառայությունների համար:<br>• **Ֆլեքս հաշիվ – Կոմունալ ծառայություններ**<br>Դուք կարող եք ստանալ $50 ամեն ամիս կենցաղային կոմունալ ծառայությունների վճարման համար, ներառյալ գազը, էլեկտրականությունը, ջուրը, կոյուղին, լայնաշերտ կապը և նույնիսկ բջջային ծրագրերը։<br>• **Առողջ մթերքներ**<br>Խնայեք առողջ մթերքների արժեքի վրա՝ $50 ամեն ամիս. լավ է գնումներ կատարել ձեր մոտակայքում գտնվող մասնակից խանութներից: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Լրացուցիչ ծառայություններ** (շարունակություն) | Էական հավելումներ (շարունակություն) | | • **Ներտնային աջակցություն.** Վայելեք օրացուցային տարվա ընթացքում մինչև 60 ժամ ընկերակցություն և առօրյա կյանքի անկախ գործողություններ, ինչպիսիք են թեթև գործերում օգնելը, ամենօրյա գործերը, տեխնիկական աջակցությունը և այլն: • **Փոխադրամիջոցներ.** Եթե ձեզ անհրաժեշտ է ուղևորություն դեպի ծրագրի կողմից հաստատված վայրեր, այս նպաստը ձեզ հնարավորություն է տալիս ստանալ տարեկան 60 միակողմանի ուղևորություն: |
| | Ֆիթնես | $0 | • **SilverSneakers® ֆիթնեսի ծրագիր** Երբ դառնաք մեր անդամը, կարող եք գրանցվել SilverSneakers-ում: Սա ներառված է մեր ծրագրում: Մանրամասներին ծանոթանալու համար այցելեք www.silversneakers.com հղումով կամ զանգահարեք SilverSneakers՝ 1-855-741-4985 (TTY: 711), երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m.-ից 8 p.m., ET: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Լրացուցիչ ծառայություններ** (շարունակություն) | Ֆիթնես<br>(շարունակություն) | | *SilverSneakers ֆիթնես ծրագիրը տրամադրվում է Tivity Health անկախ ընկերության կողմից: SilverSneakers-ը և SilverSneakers կոշիկի լոգոտիպը Tivity Health, Inc.-ի գրանցված ապրանքանիշերն են: © 2022 TivityHealth, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են:<br>• **Ֆլեքս հաշիվ – Ակտիվ ֆիթնես**<br>Այս ծրագիրն ապահովագրում է $25-ի ամեն ամիս նպաստ՝ ֆիթնեսի և ժամանցի դասերի/ծրագրերի համար, որոնք տրամադրվում են սպորտային ֆիթնես հաստատությունների կողմից, ինչպիսիք են գոլֆի դաշտերը, լողավազանները և թենիսի կորտերը, որտեղ կիրառվում են մուտքի վճարներ: Գումարի ժամկետը լրանում է ամսվա վերջին: Ցանկացած չօգտագործված միջոցների ժամկետը լրանում է տարեվերջին:<br>• **Առողջության և ֆիթնեսի հետագծում**<br>Դուք կարող եք օգտվել ֆիթնեսի հետագծման սարքից (յուրաքանչյուր տարին մեկ), ինչպես նաև մատչել առցանց ծրագրեր, որոնք կօգնեն ձեզ հասնել ձեր մտավոր սրության և ֆիթնեսի նպատակներին: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Լրացուցիչ ծառայություններ** (շարունակություն) | Առողջ սնունդ (Healthy Meals) | $0 | Դուք կարող եք վայելել առողջ սնունդ, որն առաքվում է անմիջապես ձեր տուն: Դուք կարող եք օրական մինչև երկու անգամ սնունդ ստանալ մինչև 90 օր՝ ձեր սննդային կարիքները բավարարելու համար: |
| | LiveHealth® Online | $0 | Թույլ է տալիս զրուցել խորհրդի կողմից հաստատված բժշկի կամ լիցենզավորված հոգեբույժի, հոգեբանի կամ թերապևտի հետ՝ ուղիղ, երկկողմանի տեսանյութով համակարգչի, սմարթֆոնի կամ պլանշետի վրա: |
| | Medicare համայնքային ռեսուրսների աջակցություն | $0 | Մենք օգնում ենք ձեզ անմիջապես հեռախոսով՝ տրամադրելով ձեզ առողջությանը վերաբերող տեղեկություններ և միացնելով ձեզ տեղական համայնքային ծառայություններին և աջակցության ծրագրերին: Մենք կօգնենք ձեզ համակարգել այս ծառայությունները՝ ելնելով ձեր յուրահատուկ կարիքներից:<br>Զանգահարեք մեզ ձեր ծրագրի նույնականացման քարտում նշված համարով և լրացուցիչ մանրամասների համար խնդրեք Medicare համայնքի ռեսուրսների աջակցության թիմին: |

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Լրացուցիչ ծառայություններ** (շարունակություն) | Առանց դեղատոմսի վաճառվող (OTC) պարագաներ | $0 | Ձեր նպաստից օգտվելու երեք եղանակ կա.<br>• Գնումներ կատարեք առցանց կամ օգտագործեք հավելվածը, և ապրանքները ուղարկեք ձեր տուն կամ մոտակայքում գտնվող խանութ՝ վերցնելու համար<br>• Գնումներ կատարեք ավելի քան 4,700 Walmart և Neighborhood Market խանութներից և այլ մասնակից մանրածախ խանութներից<br>• Պատվիրելու և ապրանքները ձեր տուն ուղարկելու համար զանգահարեք |
| | Արտակարգ իրավիճակներում արձագանքման անհատական համակարգի (PERS) ապահովագրություն | $0 | Ներառում է մոնիտորինգի սարքը և մոնիտորինգի ծառայությունը: Ծառայությունները սկսելու և տեղադրելու համար զանգահարեք մեզ: Մենք կարող ենք օգնել ձեզ:<br><br>Կարող է պահանջվել նախօրոք լիազորում: |

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Լրացուցիչ ծառայություններ** (շարունակություն) | Համայնքային աջակցություններ. | $0 | Ծառայությունները ներառում են.<br>• Բնակարանային անցումային նավիգացիոն ծառայություններ<br>• Բնակարանային ավանդներ.<br>• Բնակարանների վարձակալության և պահպանման ծառայություններ<br>• Կարճաժամկետ հետհիվանդանոցային բնակեցում (STPH)<br>• Վերականգնողական խնամք (բժշկական հանգիստ)<br>• Հանգստի ծառայություններ<br>• Ցերեկային վերականգնում.<br>• Բուժքույրական հաստատության անցում/տեղափոխում դեպի օժանդակ բնակության հաստատություններ<br>• Համայնքային անցումային ծառայություններ/ծերանոցից անցում դեպի տուն |

| Առողջական կարիք կամ մտահոգություն | Ծառայություններ, որոնց կարիք կարող եք ունենալ | Ձեր ծախսերը ցանցային մատակարարների դեպքում | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների մասին տեղեկություններ (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Լրացուցիչ ծառայություններ** (շարունակություն) | Համայնքային աջակցություններ (շարունակություն) | | • Անձնական խնամք և տնային տնտեսության ծառայություններ<br>• Շրջակա միջավայրի մատչելիության հարմարեցումներ (տնային փոփոխություններ)<br>• Սնունդ/բժշկական հարմարեցված սնունդ<br>• Սթափեցնող կենտրոններ |

Նպաստների վերը նշված ամփոփագիրը տրամադրվում է միայն տեղեկատվական նպատակներով և նպաստների ամբողջական ցանկ չէ: Ամբողջական ցանկի և ձեր նպաստների մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կարդալ Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) *Անդամների տեղեկագիրքը*: Եթե չունեք *Անդամների տեղեկագիրքը*, զանգահարեք Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) Անդամների սպասարկման կենտրոն այս էջի ներքևում նշված համարով՝ այն ստանալու համար: Հարցեր ունենալու դեպքում կարող եք նաև զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն կամ այցելել՝ https://shop.anthem.com/medicare/ca:

## D. Anthem MediBlue Full Dual Advantage-ից դուրս (HMO D-SNP) ապահովագրված նպաստներ

Կան որոշ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ, սակայն դրանք ապահովագրված չեն Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) կողմից, բայց ապահովագրված են Medicare-ի, Medi-Cal-ի կամ նահանգային կամ վարչաշրջանի գործակալության կողմից: Սա ամբողջական ցուցակը չէ: Այս ծառայությունների մասին տեղեկանալու համար զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն այս էջի ներքևում նշված համարով:

| Այլ ծառայություններ, որոնք ապահովագրված են **Medicare-ի**, **Medi-Cal-ի** կամ պետական գործակալության կողմից | Ձեր ծախսերը |
|---|---|
| • Medi-Cal Dental (Smile California \| Medi-Cal Dental ծրագիր)<br>• Տնային աջակցության ծառայություններ<br>• Հոգեկան առողջության և թմրամիջոցների օգտագործման խանգարման մասնագիտացված ծառայություններ<br>• Հրաժարման ծրագրեր, ներառյալ Ապրելու աջակցումից հրաժարում և Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագիր ծրագիրը և տարածաշրջանային կենտրոնի ծառայությունները<br>Խնդրում ենք կապվել ձեր խնամքի համակարգողի հետ՝ իրավասության մասին տեղեկություններ ստանալու համար և ինչպես օգտվել այս ծառայություններից: | $0 |
| Հոսփիսային խնամքի որոշ ծառայություններ ապահովագրված են Anthem MediBlue Full Dual Advantage-ից դուրս (HMO D-SNP) | $0 |
| Հոգեսոցիալական վերականգնում | $0 |
| Գործի նպատակային կառավարում | $0 |
| Հանգստի տան սենյակ և սնունդ | $0 |

## E. Ծառայություններ, որոնք Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP), Medicare-ը և Medi-Cal-ը չեն ապահովագրում

Սա ամբողջական ցուցակը չէ: Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն այս էջի ներքևում նշված համարով կամ դիմեք ձեր *Անդամների տեղեկագրքին*՝ տեղեկանալու այլ բացառված ծառայությունների մասին:

| Ծառայություններ, որոնք Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP), Medicare-ը և Medi-Cal-ը չեն ապահովագրում |
|---|
| Ծառայությունները չեն համարվում «ողջամիտ և անհրաժեշտ»՝ համաձայն Medicare-ի և Medi-Cal-ի չափանիշների |
| Փորձարարական բժշկական և վիրաբուժական բուժումներ, իրեր կամ դեղամիջոցներ, եթե ապահովագրված չեն Medicare-ով կամ Medicare-ի կողմից հաստատված կլինիկական ուսումնասիրության ներքո |
| Հիվանդագին գիրության վիրաբուժական բուժում, բացառությամբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտության |
| Ընտրովի կամ կամավոր բարելավման ընթացակարգեր |
| Կոսմետիկ վիրաբուժություն կամ այլ կոսմետիկ աշխատանք, եթե պահանջվող չափանիշները չեն պահպանվում |
| LASIK վիրաբուժություն |

## F. Որպես ծրագրի անդամ՝ դուք նաև պարտականություններ ունեք

Որպես Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) անդամ՝ դուք որոշակի իրավունքներ ունեք: Դուք կարող եք կիրառել այդ իրավունքները առանց պատժվելու: Դուք կարող եք նաեւ օգտագործել այդ իրավունքները առանց ձեր առողջապահական ծառայությունները կորցնելու: Մենք անմիջապես կտեղեկացնենք ձեզ այս փոփոխության մասին: Ձեր իրավունքների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարդացեք Անդամների ձեռնարկը: Մեր կողից վճարվող ծառայությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում, հետևյալով.

- **Դուք հարգանքի, արդարության եւ արժանապատվության իրավունք ունեք:** Սա իրավունք է տալիս՝
  - Ստանալ ապահովագրված ծառայություններ՝ առանց մտահոգվելու բժշկական վիճակի, առողջական վիճակի, առողջապահական ծառայությունների ստացման, հայտերի փորձառության, բժշկական պատմության, հաշմանդամության (ներառյալ մտավոր խանգարումների), ամուսնական կարգավիճակի, տարիքի, սեռի (ներառյալ սեռական կարծրատիպերը և

gենդերային ինքնությունը) սեռական կողմնորոշման, ազգային ծագման, ռասայի, մաշկի գույնի, կրոնի, դավանանքի կամ հասարակական օգնության մասին

- Ստանալ տեղեկություններ այլ լեզուներով և ձևաչափերով (օրինակ՝ մեծատառ, բրայլյան կամ աուդիո) անվճար
- Ազատ լինել ցանկացած ֆիզիկական զսպվածությունից կամ անզգուշությունից

- **Դուք իրավունք ունեք տեղեկատվություն ստանալ ձեր առողջության խնամքի մասին:** Այդ թվում նաև բուժման և բուժման տարբերակների մասին տեղեկություններ: Այս տեղեկությունները պետք է լինեն այնպիսի լեզվով և ձևաչափով, որը կարող եք հասկանալ: Սա ներառում է տեղեկատվություն ստանալու իրավունքը հետևյալի մասին.
  - Նկարագրություն մեր կողմից փոխհատուցվող ծառայությունների մասին
  - Ի՞նչպես ստանալ ծառայություններ
  - Որքա՞ն կարժենան ծառայությունները:
  - Առողջապահական խնամքի մատկարարների անունները

- **Դուք իրավունք ունեք ձեր բուժօգնության հետ կապված որոշումներ կայացնելու, նաև բուժումը մերժելու:** Սա իրավունք է տալիս՝
  - Ընտրել առաջնային խնամքի մատակարար (PCP) և ցանկացած պահի փոխել ձեր առաջնային խնամքի մատակարարին տարվա ընթացքում
  - Օգտվել կանանց բուժօգնության ծառայությունից առանց ուղեգրի
  - Արագ ստանալ ձեր փոխհատուցվող ծառայությունները և դեղերը
  - Իմանալ բուժման  բոլոր տարբերակների մասին, անկախ նրանից, թե ինչ արժեքներ և արդյոք փոխհատուցվող են
  - Հրաժարվել բուժումից, նույնիսկ եթե ձեր բուժաշխատողը խորհուրդ չի տալիս դա անել
  - Դադարեցնել դեղի ընդունումը, նույնիսկ եթե ձեր բուժաշխատողը խորհուրդ չի տալիս դա անել
  - Հարցնել երկրորդ կարծիք: Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP) կվճարի ձեր երկրորդ կարծիքի այցելության արժեքը
  - Ձեր առողջապահական ցանկությունները հայտնի դարձնել նախնական հրահանգով

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

- **Դուք իրավունք ունեք ժամանակին ընդգրկվել խնամքի համար, որը չունի հաղորդակցություն կամ ֆիզիկական մուտքի խոչընդոտներ:** Սա իրավունք է տալիս՝
  - Ստանալ ժամանակավոր բժշկական օգնություն
  - Գալ և զնալ առողջապահական ծառայությունների մատուցողի գրասենյակի: Սա նշանակում է առանց արգելքի հասանելիություն հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ հաշվի առնելով Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքը
  - Ունենալ թարգմանիչներ, որոնք կօգնեն հաղորդակցվել ձեր առողջապահական ծառայություններ մատակարարների և ձեր առողջապահական ծրագրի հետ
- **Դուք իրավունք ունեք դիմել անհետաձգելի բուժօգնություն համար, երբ և որտեղ դրա կարիքն ունենաք:** Սա նշանակում է, որ դուք իրավունք ունեք.՝
  - Ստանալ արտակարգ իրավիճակների ծառայություններ առանց նախօրոք լիազորման
  - Անհրաժեշտության դեպքում օգտագործել արտացանցային հրատապ կամ շտապ օգնության մատակարար
- **Դուք զաղտնիության պահպանման իրավունք ունեք:** Սա իրավունք է տալիս՝
  - Խնդրել եւ ստանալ ձեր բժշկական գրառումների պատճենը, որպեսզի կարողանաք հասկանալ եւ խնդրել ձեր գրառումները փոփոխել կամ ուղղել
  - Ձեր անձնական առողջության մասին տեղեկությունները պահել զաղտնի
- **Դուք իրավունք ունեք դիմել ձեր փոխհատուցված ծառայությունների կամ խնամքի համար:** Սա իրավունք է տալիս՝
  - Հայց կամ բողոք ներկայացնել մեր կամ մեր մատակարարների դեմ
  - Բողոք ներկայացնել California-ի Կառավարվող առողջապահական խնամքի վարչությանը (DMHC) անվճար հեռախոսահամարով՝ (1-888-466-2219), կամ TDD գծով՝ (1-877-688-9891), լսողության ու խոսքի խանգարումների համար: DMHC կայքը (www.dmhc.ca.gov) ունի բողոքի ձևեր, Անկախ բժշկական վերանայման (IMR) դիմումի ձևեր և հրահանգներ, որոնք հասանելի են առցանց:
  - Խնդրեք DMHC-ից Medi-Cal ծառայությունների կամ բժշկական բնույթի ապրանքների IMR
  - Բողոքարկեք DMHC-ի կամ մեր մատակարարների կողմից ընդունված որոշ որոշումներ

- Հայցել Նախանգային լսում
- Մանրամասներ ստանալ, թե ինչու են ծառայությունները մերժվել

Ձեր իրավունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք կարդալ -ի *Անդամների ձեռնարկը*: Եթե հարցեր ունեք, զանգահարեք Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) Անդամների սպասարկման կենտրոն այս էջի ներքևում նշված համարով՝ այն ստանալու համար:

Կարող եք նաև զանգահարել հատուկ Օմբուդսմենին այն մարդկանց համար, ովքեր ունեն Medicare և Medi-Cal 1-855-501-3077 երկուշաբթիից ուրբաթ, ժամը 9:00 a.m.-ից 5:00 p.m.-ը, կամ Medi-Cal Օմբուդսմենի գրասենյակ 1-888-452-8609 երկուշաբթիից ուրբաթ, 8:00 a.m.-ից 5:00 p.m.-ը:

## G. Ինչպես զանգատ կամ բողոքարկում ներկայացնել մերժված ծառայության դեպքում

Եթե բողոք ունեք կամ կարծում եք, որ Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP) պետք է ապահովագրի մի բան, որը մենք մերժել ենք, զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն այս էջի ներքևում նշված համարով: Դուք կարող եք բողոքարկել մեր որոշումը:

Ձեր բողոքների և բողոքարկման վերաբերյալ հարցերին պատասխան ստանալու համար կարող եք կարդալ -ի *Անդամների ձեռնարկի* Գլուխ 9-ը: Կարող եք նաև զանգահարել Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) Անդամների սպասարկման կենտրոն այս էջի ներքևում նշված համարով՝ այն ստանալու համար:

Բողոքները և բողոքարկումները կարող եք ներկայացնել գրավոր:

Գրեք էլփոստով՝

Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP)
Attn: Complaints, Appeals and Grievances
4361 Irwin Simpson Road
Mailstop: OH0205-A537
Mason, OH 45040

Անկախ բժշկական վերանայման (IMR) համար կարող եք դիմել Վերահսկվող բուժօգնության Կալիֆորնիայի բաժանմունքի Օգնության կենտրոն (DMHC): IMR-ը մատչելի է Medi-Cal-ի ցանկացած ապահովագրված ծառայության կամ ապրանքի համար, որը բժշկական է իր բնույթով: IMR-ը դա ձեր գործի վերանայումն է այնպիսի բժիշկների կողմից, ովքեր չեն մտնում մեր ծրագրի մեջ: Եթե IMR-ը որոշվի ձեր օգտին, մենք պետք է տրամադրենք ձեզ ձեր ուզած ծառայությունը կամ ապրանքը: Դուք ոչինչ չեք վճարում IMR-ի համար:

Սովորաբար, դուք պետք է բողոքարկումը ներկայացնեք մեզ՝ նախքան IMR խնդրելը: IMR-ի համար կարող եք դիմել 6 ամսվա ընթացքում՝ ձեր բողոքարկման մասին գրավոր որոշումը ստանալուց հետո: DMHC-ը կարող է ընդունել ձեր դիմումը 6 ամիս հետո, ելնելով խելամիտ պատճառներից, ինչպիսիք են՝ ձեր բժշկական վիճակը, որի պատճառով 6 ամսվա ընթացքում դուք չեք դիմել IMR իրականացնելու, կամ դուք մեզնից չեք ստացել համապատասխան ծանուցում անկախ բժշկական փորձաքննության գործընթացի վերաբերյալ:

IMR-ի համար հարցում ներկայացնելու համար.

- Լրացրեք Անկախ բժշկական վերանայման/Բողոքի դիմումի ձևը, որը մատչելի է www.dmhc.ca.gov/fileacomplaint/submitanindependentmedicalreviewcomplaintform.aspx կայքում կամ զանգահարեք DMHC-ի Օգնության կենտրոն՝ 1-888-466-2219 հեռախոսահամարով: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-688-9891:
- Եթե ունեք դրանք, կցեք նամակների կամ այլ փաստաթղթերի պատճենները, որոնցով մենք մերժել ենք ծառայությունը կամ պարագան: Սա կարող է արագացնել IMR-ի գործընթացը: Ուղարկեք փաստաթղթերի պատճենները, այլ ոչ բնօրինակները: Օգնության կենտրոնը չի կարող վերադարձնել որևէ փաստաթուղթ:
- Լրացրեք Լիազորված օգնականի ձևը, եթե ինչ-որ մեկն օգնում է ձեզ IMR-ի հարցում: Ձևը կարող եք գտնել այստեղ՝ www.dmhc.ca.gov/Portals/0/Docs/HC/AccessibleAAFormEnglish%20%285SG%29.pdf: Կամ զանգահարեք Վարչության Օգնության կենտրոն՝ 1-888-466-2219: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն՝ 1-877-688-9891:
- Փոստով կամ ֆաքսով ուղարկեք ձեր ձևաթղթերը և այլ կից փաստաթղթեր հետևյալ հասցեով՝

  Help Center
  Department of Managed Health Care
  980 9th Street, Suite 500
  Sacramento, CA 95814-2725
  Ֆաքս՝ 1-916-255-5241

## H. Ինչ անել, եթե կասկածում եք խարդախության մեջ

Առողջապահության ոլորտի շատ մասնագետներ եւ կազմակերպություններ, որոնք ծառայություններ են մատուցում, ազնիվ են: Ցավոք, կան անհատներ, որոնք անազնիվ են:

Եթե կարծում եք, որ բժիշկը, հիվանդանոցը կամ այլ դեղատուն ինչ-որ սխալ բան է անում, խնդրում ենք դիմել մեզ:

- Զանգահարեք մեզ Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) Անդամների սպասարկման կենտրոն: Հեռախոսահամարները նշված են այս էջի ներքևում:
- Կամ զանգահարեք Medi-Cal-ի Անդամների սպասարկման կենտրոն՝ 1-800-841-2900: TTY-ից օգտվողները կարող են զանգահարել՝ 1-800-497-4648:
- Կամ զանգահարեք Medicare-ին՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY-ից օգտվողները կարող են զանգահարել՝ 1-877-486-2048: Կարող եք զանգահարել այս հեռախոսահամարներով օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է:
- Կամ զանգահարեք California-ի Բուժօգնության ծառայությունների խարդախության և բռնության բաժանմունքի թեժ գիծ՝ 1-800-822-6222:
- Կամ զանգահարեք Արդարադատության նախարարության Գլխավոր դատախազի գրասենյակի Medi-Cal-ի խարդախության և տարեցների չարաշահման բյուրո՝ 1-800-722-0432: Ձեր զանգն անվճար է և գաղտնի:

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

**Եթե դուք ունեք ընդհանուր բնույթի կամ ձեր ծրագրի, ծառայությունների, հաշիվների ներկայացման կամ Անդամի ID քարտերի հետ կապված հարցեր, խնդրում ենք զանգահարել Anthem MediBlue Full Dual Advantage-ի (HMO D-SNP) Անդամների սպասարկման կենտրոն՝**

**ՀԵՌԱԽՈՍ.1-916-419-7500**

Այս համարներին կատարվող զանգերն անվճար են: 8 a.m.-ից 8 p.m.-ը, շաբաթը յոթ օր (բացառությամբ Գոհաբանության և Սուրբ ծննդյան տոների) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը, և երկուշաբթիից ուրբաթ (բացառությամբ արձակուրդների) ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը:

Անդամների սպասարկման կենտրոնը տրամադրում է թարգմանչի անվճար ծառայություններ անգլերեն չիմացող մարդկանց համար:

**TTY: 711**

Այս համարը պահանջում է հատուկ հեռախոսային սարքավորումներ և նախատեսված է միայն այն մարդկանց համար, ովքեր դժվարություններ ունեն լսողության կամ խոսելու հետ:

Այս համարներին կատարվող զանգերն անվճար են: 8 a.m.-ից 8 p.m.-ը, շաբաթը յոթ օր (բացառությամբ Գոհաբանության և Սուրբ ծննդյան տոների) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը, և երկուշաբթիից ուրբաթ (բացառությամբ արձակուրդների) ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը:

**Եթե հարցեր ունեք ձեր առողջության մասին՝**

- Զանգահարեք առաջնային խնամքի մատակարարին (PCP): Հետևեք ձեր առաջնային խնամքի մատակարարի հրահանգներին խնամք ստանալու համար, երբ գրասենյակը փակ է:
- Եթե ձեր PCP-ի գրասենյակը փակ է, կարող եք նաև զանգահարել Anthem MediBlue Dual Advantage-ի 24/7 բուժքույրական գիծ: Բուժքույրը կլսի ձեր խնդիրը և կտեղեկացնի ձեզ, թե ինչպես ստանալ խնամք: 24/7 բուժքույրական գծի հեռախոսահամարներն են. **1-855-658-9249** (TTY: **711**): Այս համարներին կատարվող զանգերն անվճար են, շաբաթը յոթ օր, տարին 365 օր:

Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP) ունի նաև անվճար թարգմանչական ծառայություններ, որոնք հասանելի են ոչ անգլերեն խոսողների համար:

Զանգահարեք՝ **1-833-707-3129** (TTY: **711**), 8 a.m.-ից 8 p.m.-ը, շաբաթը յոթ օր (բացառությամբ Գոհաբանության և Սուրբ ծննդյան տոների) հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը, և երկուշաբթիից ուրբաթ (բացառությամբ արձակուրդների) ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը: Այս համարին զանգերն անվճար են:

# Anthem MediBlue Full Dual Advantage (HMO D-SNP) | 2023 Նպաստների ամփոփագիր

**Եթե դուք անհապաղ վարքագծային առողջության պահպանման կարիք ունեք, խնդրում ենք զանգահարել Behavioral Health Crisis Line.**

- Los Angeles վարչաշրջան. **1-800-854-7771**, (TTY: **711**)
- Santa Clara վարչաշրջան. **1-855-278-4204**, (TTY: **711**)

Այս համարներին զանգերն անվճար են: Օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը:

Anthem MediBlue Full Dual Advantage-ը (HMO D-SNP) ունի նաև անվճար թարգմանչական ծառայություններ, որոնք հասանելի են ոչ անգլերեն խոսողների համար: